Պատմություն և մշակույթ 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.235

The Border and the Sign

Anush Safaryan
https://orcid.org/0009-0008-2370-9975
Yerevan State University, PhD Candidate
anush.safaryan@ysu.am

Keywords: border, sign, symbol of identity, monument, khachkar, border-cross.

The act of demarcating a border is not merely a geographical, military, political, or economic phenomenon; it is also a cultural one. It functions not only as a defense mechanism but also as a unique communication system, incorporating the placement of certain structures and signs along the border.

The article goes on to explore the function of these signs, their location, and the reasons for their specific use. The article then attempts to classify these signs, present their architectural and iconographic features, and highlight their ritualistic functions at the border. The article also examines the organisational, ideological, and cultural potential of these signs for border communities and settlements.

The multifaceted nature of border signs is also discussed, insofar as they are not merely perceived as territorial delimiters, but also studied for their role as unique symbols of nationalism, identity, and communication. A semiotic analysis of border markings is undertaken, exploring the symbolic meanings behind various signs and how they shape the cultural and political discourse of the border.

The research focuses primarily on the Armenian-Azerbaijani border, drawing parallels with examples from the Tavush, Gegharkunik, and Syunik regions. The study places particular emphasis on the examination of religiously significant border markers or indicators, such as khachkars and cross-based structures, as these types of signs frequently become primary targets during periods of conflict.

Սահմանը և նշանը[1]

Անուշ Սաֆարյան
ԵՊՀ, հայցորդ

[1] Հոդվածը տպագրվել է «22YR-6A010» ծածկագրով ծրագրի շրջանակում:

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 235-250.

Received: 20.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 19.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

The Border and the Sign

Սահմանը և նշանը

«Զսինաւռ լերանց եւ դաշտաց՝ քաղքնոյ եւ բերդերոյ՝ եւ զգեղերոյ դնել պիտի նշանով եւ գրով ամրրցնել»

(Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք)

Հիմնաբառեր՝ սահման, նշան, ինքնության խորհրդանշան, հուշարձան, խաչքար, սահմանախաչ:

Սահմանի նշումը ոչ միայն աշխարհագրական, ռազմական, քաղաքական, տնտեսական երևույթ է, այլ նաև մշակութային ֆենոմեն է: Այն ոչ միայն պաշտպանական, այլ նաև յուրահատուկ հաղորդակցման համակարգ է, որն իր մեջ ներառում է որոշակի կառույցների և նշանների տեղադրումը սահմանին: Հատկապես հետաքրքրական է, թե որոնք են սահմանները ցուցող այդ նշանները, որտեղ են տեղադրվում դրանք և ինչու են կիրառվում հենց այդպիսիք:

Հոդվածում փորձ է արվում դասդասել այդ նշանները, ներկայացնել դրանց ճարտարապետական և պատկերագրական առանձնահատկությունները և վեր հանել դրանց ծիսապաշտամունքային գործառույթը սահմանին: Քննության են առնվում նաև նշանների կազմակերպական, գաղափարական, մշակութային ներուժը սահմանային բնակավայրերի և համայնքների համար:

Քննարկվում է նաև սահմանային նշանների բազմակողմ բնույթը. նշանները դիտարկվում են որպես ոչ միայն տարածքային սահմանազատիչներ, այլև հատուկ քննվում է սահմանային նշանների դերակատարումը որպես ազգայնականության, ինքնության և հաղորդակցության յուրահատուկ խորհրդանիշներ: Անդրադարձ է կատարվում սահմանային գծանշումների սեմիոտիկային՝ քննարկելով, թե որոնք են տարբեր նշանների հիմքում ընկած խորհրդանշական իմաստները և ինչպես են դրանք ձևավորում սահմանի մշակութային և քաղաքական դիսկուրսը:

Քննության հիմնական տարածքը հայ-ադրբեջանական սահմանն է (Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի օրինակներով): Հետազոտության համար հատկապես հետաքրքրական է կրոնական նշանակություն ունեցող սահմանային զատիչների կամ ցուցիչների ուսումնասիրությունը (մասնավորապես խաչքարերի և խաչային հորինվածքների), քանի որ կոնֆլիկտի ժամանակ երբեմն առաջնային թիրախ դառնում են հենց նման նշանները:

Граница и знак

Ануш Сафарян

ЕГУ, *Аспирант*

Ключевые слова: граница, знак, символ идентичности, памятник, хачкар, пограничный крест.

Ознаменование границы представляет собой не только географическое, военное, политическое и экономическое явление, но и культурный феномен. Граница служит не только защитной функцией,

но и представляет собой уникальную систему коммуникации, в рамках которой размещаются определённые структуры и знаки. Особую ценность представляет изучение таких знаков, их размещение и выбор конкретных типов знаков для обозначения границ.

Целью данной статьи является классификация пограничных знаков, а также анализ их архитектурных и иконографических особенностей. В статье также акцентируется внимание на ритуальной функции этих знаков в контексте границы. В работе рассматривается организационный, идеологический и культурный потенциал пограничных знаков для местных сообществ и населённых пунктов, находящихся вблизи границы.

Обсуждается многогранная природа пограничных знаков, которые рассматриваются не только как территориальные разделители, но и как важные символы, играющие ключевую роль в формировании национальной идентичности, идеологии и коммуникации. Важным аспектом исследования является семиотический анализ этих знаков, где рассматриваются символические значения, заложенные в различных знаках, а также то, как эти значения способствуют формированию культурного и политического дискурса, связанного с границей.

Основной объект исследования составляет армяно-азербайджанская граница (на примере Тавушского, Гегаркуникского и Сюникского регионов). Особое внимание уделяется изучению пограничных знаков и маркеров с религиозным значением (в частности хачкаров и крестовых конструкций), так как в условиях конфликта именно эти знаки часто становятся первоочередной целью для уничтожения или демонтирования.

** * **

Ներածություն: Սահմանը. տեսական մոտեցումներ

Ամենապարզ ձևակերպմամբ՝ սահմանները բաժանում են մի աշխարհագրական տարածության քաղաքական, տնտեսական, սոցիալական կամ մշակութային նշանակությունը մյուսից:

Տարբեր գիտակարգեր հետազոտում են սահմանները տարբեր դիտանկյուններից՝ սկսած ֆիզիկական տարածությունն ընդգծող ցուցիչներից մինչև մշակութային և սոցիալական ֆենոմենները [Newman 2003, 13-14]:

Որպես կանոն, մարդկանց մեծամասնության համար սահմաններն իրականացնում են երեք կարևորագույն գործառույթ. ա. օգնել ստեղծել կարգուկանոն՝ գծելով իշխանության սահմանները, բ. կողմնակի ուժերից պաշտպանել նրանց, ովքեր գտնվում են հստակ սահմանազատված տարածքներում, և գ. ապահովել քաղաքացիների և բնական ռեսուրսների պատշաճ վերահսկողությունն ու կառավարումը [Ramutsindela 2014]: Այս գործառույթները սկիզբ են առնում մարդկության նստակեցության անցնելու ժամանակից, երբ դրանք կոնկրետ արտահայտություն են ստանում պարիսպների, տարատիպ պատվարների և անցակետերի տեսքով և հարատևում են մինչև այսօր [Remutsindela 2017]:

Սահմանագիծը ներկայացնում է տարածքային բաժանման հարաբերականորեն ստատիկ մոդել, որը կարող է արտահայտվել ֆիզիկապես՝ լինի մարդու կողմից կամ արհեստական կառուցված սահմանագծային քարերով, պատերով կամ ցանկապատներով, թե բնական առանձնահատկություններով, ինչպիսիք են գետերը, լեռնաշղթաները և նույնիսկ ծառերը, որոնք ստանում են որոշակի նշանակություն՝ որպես սահմանային նշաններ: Քաղաքական սահմանները կարող են նաև բյուրոկրատիկ և ինստիտուցիոնալ ձևով կառուցվել առանց ֆիզիկական նշանների

գոյության, ինչպես ժամանակակից ազգ-պետությունների դեպքում [Lee and North 2016]: Սահմանագծերը ավելի օգտակար են որպես տերմին՝ նկարագրելու մտավոր կառուցվածքները և դիսկուրսները, որոնք օգնում են սահմանել և բաժանել մշակութային, սոցիալական, էթնիկական, կրոնական և լեզվական ոլորտները [Anderson 2001; Brunet-Jailly 2005; Newman 2003; Delanty 2006; Sendhardt 2013; Lee and North 2016]:

Պետք է հստակ տարբերակել պետական սահմանները[1] և սահմանային տարածքները կամ գոտիները[2]: Մի կողմից սահմանները վերաբերում են միջպետական բաժանման ինստիտուտին՝ համաձայն միջազգային իրավունքի, մյուս կողմից, սահմանամերձ տարածքները տարածքային առումով սահմանվում են որպես տվյալ երկրի սահմանի երկայնքով ձգվող ֆիզիկական տարածք:

Միջազգային սահմանների մեծ մասը կարելի է բաժանել երեք կատեգորիայի՝ բնական, արհեստական և մշակութային [Guo 2015, 5-10].

- Բնական սահմաններ են համարվում այն սահմանները, որոնք հետևում են բնական-աշխարհագրական առանձնահատկություններին, ինչպիսիք են գետերը, լեռնաշղթաները, գետաբերանները և այլն [Remutsindela 2017]: Բնական սահմանները հստակ բաժանարար գիծ են ստեղծում երկու պետությունների միջև, հաճախ չեն պահանջում ակտիվ սահմանապահներ և պատմականորեն դրանք ավելի դժվար է եղել վիճարկել, քան այլ սահմանները:
- Երկրաչափական սահմաններն (հայտնի է նաև որպես ուղիղ եզրագիծ) այն սահմաններն են, որոնք ձևավորվում են կամ քարտեզի, կամ ծովային գծապատկերի վրա գծված ուղիղ գծերով կամ լայնության կորերին հետևող գծերով:
- Մշակութային սահմաններն այն սահմաններն են, որոնք հեռացնում կամ մոտեցնում են տարբեր էթնիկական պատկանելության հայրենիքների, լեզվախմբերի և այլ մշակութային համայնքների սահմանները: Դրանք հաճախ թվագրվում են ժամանակակից դարաշրջանից առաջ և հաճախ կարող են լինել դարերի ընթացքում իրար հաջորդող ռազմական հակամարտությունների արդյունք [Van Schendel 1997, 231-232]:

Սահմանային վեճերը հաճախ բխում են սահմանների «նկարագրության» սովորական սխալներից և բարդություններից: Առանց քաղաքական սահմանների վերաբերյալ հստակ

[1] Համաձայն «ՀՀ պետական սահմանի մասին» օրենքի Հայաստանի Հանրապետության պետական սահմանը (այսուհետ՝ պետական սահման) այն գիծն է և այդ գծով անցնող այն ուղղահայաց մակերևույթը, որոնք որոշում են Հայաստանի Հանրապետության տարածքի՝ցամաքի, ջրերի, ընդերքի, օդային տարածության շրջանակները (https://www.arlis.am/documentview.aspx?docID=52327, 02.02.2024):

Պետական սահմանը որոշվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության օրենքով:

[2] Նույն օրենքի 4-րդ գլուխը սահմանում է, որ սահմանային գոտին այն տարածքն է, որը Հայաստանի Հանրապետության պետական սահմանագծից ծավալվում է դեպի Հայաստանի Հանրապետության տարածքի խորքը՝ մինչև հինգ կիլոմետր լայնությամբ (https://www.arlis.am/documentview.aspx?docID=52327, 02.02.2024):

սահմանումների և/կամ երկկողմ (և, անհրաժեշտության դեպքում՝ բազմակողմ) համաձայնագրերի՝ կարող են վեճեր առաջանալ [Olubukola 2019, 205, Պետրոսյան 1993, 14-15]:

Այսպիսով, սահմանային նշաններն ունեն մշակութային, ինքնութենական, կրոնական, պատմական կամ քաղաքական ենթատեքստեր, դրանք պարունակում են որոշակի հաղորդագրություններ, որոնք ունեն կոնկրետ ազդեցություն այդ նշանների տեղադրման վայրի, դիրքի, պատկերագրության և այլնի վրա: Մեծ է նաև այդ նշանների դերը հաղորդակցության և ինքնության դրսևորման գործում:

Սահմանային նշանների դասակարգումը. սահմանի պետական և համայնքային նշումը:

Ընդհանրապես Մերձավոր արևելքում առնվազն սկսած Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից, երբ որ առաջանում են նոր կայսրություններ, ըստ էության սահմանները սկսում են կարևորվել: Պիտի նկատի ունենալ, որ բացի բնական սահմաններից ստեղծվում են նաև այլ միջոցներ, ամրություններ, զանազան համակարգեր այդ սահմանները նշելու համար, ինչպիսին էին, օրինակ, հռոմեական լիմեսները [Հակոբյան 1986], կամ թերմինուսները [Bárcena 2019; Burroughs 2019-2021], հունական հորոյները [Potter 2022], Արտաշիսյան սահմանաքարերը որոնք նշում էին ներքին տիրույթները [Тревер 1952; Տիրացյան 1957; Тирацян 1959; Հակոբյան 2002], Ուտիքի և Արցախի Տիգրանակերտերը, որոնք կառուցվել են Արցախյան տափաստանը մինչև Կուր գետը վերահսկողության տակ առնելու համար [Petrosyan 2023, 437-438] և իհարկե միջնադարի սահմանաքար-խաչքարերը:

Այսպիսով, սահմանային նշանների կիրառումը բնորոշ է բոլոր ժամանակներին և բոլոր պետական և քաղաքական միավորումներին:

Հարկ է նկատել, որ սահմաններ ցուցող նշանները իրականացնում են ոչ միայն սահմանը «փակող» կամ խոչընդոտող գործառույթ, այլ նաև «բացող» գործառույթ, ինչպես օրինակ զանազան ցուցանակները ներպետական և միջպետական սահմաններին (նկ. 1): Սահմանները նաև միջոց են և ցուցիչ՝ «մեր»-ի և «նրանց»-ի միջև սահմանը տարանջատելու համար [Van Schendel 1997]: Սահմանը միևնույն ժամանակ կարող է հանդիսանալ պատ կամ դարպաս, խոչընդոտ և հաղորդակցության միջոց, մեկուսացնող և միավորող պարադոքս: Սահմանը որպես «խոչընդոտ» է ընկալվում հիմնականում կախված միջազգային իրավիճակից, հարևան երկրների փոխհարաբերություններից և նրանց քաղաքական, գաղափարական կամ տնտեսական իրավիճակի փոփոխություններից:

Ընդհանրապես սահմանների նշման համար կան բազմաթիվ ձևեր և միջոցներ ինչպիսիք են սահմանային ծառերը, սյուները, հուշարձանները և այլն [Tarkiainen 2012, էջ 51-53; Thomas 2021]: Մեզ համար առաջնային է տարբերակել սահմանային նշման պետական և համայնքային և\կամ մասնավոր ձևերն ու միջոցները: Ըստ այդմ՝ Հայաստանում կարելի է տարբերակել սահմանների նշման հետևյալ հիմնական ձևերը.

- Երկաթբետոնե սյունը՝ որպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանանշում,
- Դրոշը՝ որպես սահմանային «պետական» նշան,
- Դիրքերը՝ «պոստերը»՝ որպես «ֆիզիկական» սահման,
- Ցուցանակները՝ որպես զգուշացնող նշաններ,
- Մետաղական խաչերն ու խաչքարերը՝ որպես սահմանի ինքնությունը խորհրդանշող նշաններ,

- «Ուղեկցող» հուշարձաններ:

Ըստ «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին» օրենքի 9-րդ հոդվածի՝ «Պետական սահմանի խնամքի կանոններով կարգավորվում են սահմանանշանների տեղադրումը և պահպանումը, դրանց վերահսկողական զննումները, սահմանի երկայնքով թափանցիկ, սանիտարական շերտի ստեղծումն ու դրա խնամքը, սահմանակից պետության հետ պետական սահմանի համատեղ ստուգումները»[1]: Իսկ «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի սահմանանշանների ձևերը, տեղադրման կարգը և նկարագիրը» օրենքով սահմանվում է.

- Պետական սահմանը տեղանքում գծանշվում է պարզ տեսանելի ամբողջական (միակտոր) երկաթբետոնե կառուցվածք ունեցող հիմնական, միջանկյալ (լրացուցիչ) և կենտրոնական սահմանային նշաններով, որոնց հիմնական գույնը սպիտակ է՝ համաձայն ձևի:
- Հիմնական սահմանանշանի վերևամասի ներփորված հատվածում տեղադրվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը, որի չափերը 190 x 190 մմ են: Այն պատրաստվում է արույրե (պլաստիկ) կերպարանվող ձուլվածքից կամ այլ նյութից: Զինանշանից ներքև գրվում է սահմանային նշանի համարը, իսկ համարից ներքև պատկերվում են Հայաստանի Հանրապետության պետական դրոշի գույները…[2]:

Բացի վերը նշված օրենքով ՀՀ պետական սահմանի սահմանանշման ձևի՝ որպես պետական սահմանանշման ձև կարելի է համարել ՀՀ պետական **դրոշի** կիրառումը սահմանին (այստեղ սակայն հարկ է նկատել, որ շատ հաճախ դրոշի կիրառումը իրականացվում է համայնքային կամ անհատական նախաձեռնությամբ)[3]:

Որպես սահմանանշման պետական ձև կարելի է դիտարկել նաև դիրքերը՝ «պոստերը», որոնք հանդիսանում են «ֆիզիկական» սահման: Սակայն հարկ է նկատել, որ նույնիսկ այստեղ ենք տեսնում անհատական նախաձեռնություններ, որոնք դարձել են ֆիզիկական սահմանին ուղեկցող պարտադիր բաղադրիչներ, այդպիսիք են դրոշները, մետաղական խաչերը, խաչքարերը, փոքրիկ մատուռները և այլն:

---

[1] ՀՀ պետական սահմանի մասին օրենք տես՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=52327, 02.02.2024:

[2] Մանրամասն տես՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=117885:

[3] ՀՀ դրոշի մասին օրենք, հոդված 3. ՀՀ դրոշի գործածումը.
Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես բարձրացվում է՝
Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, կառավարության, սահմանադրական դատարանի, դատարանների, դատախազության մարմինների, մարդու իրավունքների պաշտպանի, կենտրոնական բանկի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների, Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների),
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի) շենքերի վրա:
….Սույն հոդվածով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության դրոշը կարող է տեղադրվել այլ վայրերում, շենքերի, շինությունների, այդ թվում՝ բնակելի շենքերի վրա (մանրամասն տես՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=49795, 02. 02. 2024):

Բացի վերը նշված օրենքով սահմանվող սահմանային նշանի՝ կիրառվում են բազմաթիվ այլ նշաններ և միջոցներ սահմանները նշելու համար, որոնք որոշ դեպքերում նաև անհատական կամ մասնավոր նախաձեռնություններ են (նման դեպքերում դրանք ունեն բուն սահմանից թույլատրելի հեռավորություն)։ Այդպիսիք են **խաչքարերը և մետաղական խաչերը։**

Խաչը՝ որպես քրիստոնեության գլխավոր խորհրդանիշներից մեկը, կենտրոնական տեղ էր զբաղեցնում հայ միջնադարի մշակութային լանդշաֆտում։ Հայաստանում խաչերի՝ որպես կրոնական ինքնության (նաև մշակութային ինքնության) խորհրդանիշների տեղադրելու ավանդույթը գոյություն է ունեցել դեռևս քրիստոնեության ընդունման սկզբնական ժամանակներից։

Խաչը և խաչքարը հայ ինքնության ամենաբնութագրական խորհրդանշաններից մեկն է և պատահական չէ, որ այն իր յուրահատուկ տեղն է գրավում նաև սահմանին՝ ցուցելով տեղանքի ինքնությունը։

«...խաչքարն իր ներկայությամբ իսկ հանդիսանում էր տեղանքը նշող, սրբացնող և պաշտպանող։ Ցանկացած ոչ սրբազան միջավայրում խաչքարի կանգնեցումն արդեն կարգավորում-սրբազնացնում էր շրջապատը։ Այս հիմնարար գործառույթով կարելի է բացատրել խաչքարերի կանգնեցումը խարմերուկներում և ճանապարհների եզրին, տեղանքում գերիշխող դիրք ունեցող բարձունքներին, ժայռազանգվածների վրա կամ աղբյուրների մոտ։ Որոշ արձանագրություններում՝ հատկապես հողերի և այլ տիրույթների սահմանները նկարագրող խաչերը (տվյալ դեպքում խաչքարերը) նկարագրվում են որպես սահմանանիշ։ Կարծում ենք, որ հաճախ դրանք ոչ թե կանգնեցվել են որպես սահմանները նշող, այլ ուղղակի արդեն գոյություն ունեցող խաչքարն իր ներկայությամբ իսկ դառնում էր տեղանքը նշող և դրանով իսկ ներառվում նրա նկարագրություններում...» [Պետրոսյան 2008, 255-257]։

Այսպիսով խաչքարերի սահմանանիշ գործառույթն ամենևին նոր երևույթ չէ, դեռևս միջնադարյան խաչքարային արձանագրությունները հայտնում են խաչքարերի սահմանանիշ գործառույթի մասին [Օրբելեան 1910, 348; Շահինյան 1984, 56-59; ԴՀՎ 4, 126; Պետրոսյան 2008, 255-257]։ Արձանագրական տեքստերը հաճախ նույնիսկ խաչքարերը բնութագրում են հենց սահմանախաչեր, ինչպես օրինակ Հառիճավանքի Զաքարե ամիրսպասալարի խաչքարային արձանագրությունում [Շահինյան 1984, 56)։ Խաչքարային որոշ արձանագրություններ վկայում են, որ խաչքարը կանգնեցվել է հենց սահմանը պաշտպանելու և այն հատելու փորձերը կասեցնելու նպատակով [Պետրոսյան 2008, 256]։

Սահմաններում (մարտական դիրքերում, սահմանային բնակավայրերում) տեղադրված խաչքարերի և խաչային հորինվածքների պարագայում որոշ դեպքերում տեսնում ենք խաչքարերի դասական օրինակների կրկնություն, որոնց պարագայում միայն խաչքարային արձանագրությունն է ստեղծում կապը պատերազմի, սահմանի կամ պաշտպանության հետ։ Միաժամանակ բավականին մեծ տարածում ունեն նաև այն խաչքարերը, որոնց հորիվածքները ներառում են այնպիսի մոտիվներ, որոնք խաչքարային հորինվածքին հաղորդում են «ռազմական» բնույթ. արծիվ, թուր, վահան, զանազան զինատեսակներ և դրանց տարաձև համադրություններ։ Վարպետները փորձել են դրանց միջոցով հաղթական-պաշտպանական կերպար հաղորդել հորինվածքին և դրանով իսկ այն կապել պաշտպանության կամ պատերազմի թեմային։ Ամենայուրօրինակ դրսևորումը, որը սկզբունքորեն կապված է սահմանի և պատերազմի հետ,

«թուր-խաչերը» կամ «սահմանային խաչերն» են[1] (նկ. 2)։ Սկզբնապես դրանք նախաձեռնվել են խաչքարագործ վարպետ Վարազդատ Համբարձումյանի կողմից և տեղադրվել են Արցախի պաշտպանական գոտիներում[2]։ Այնուհետև նման խաչքարերը լայն տարածում են գտել նաև Հայաստանում. դրանք տեղադրվել են ինչպես սահմանային, այնպես էլ ոչ սահմանային բնակավայրերում (վերջինիս դեպքում կարծես թե կորցնելով իրենց սկզբնական գործառույթը)։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում **մետաղական խաչերը**[3]։ Այս խաչերը լայն տարածում ունեն հանրապետության ողջ տարածքում (առանձին բնակավայրերի համար այս խաչերի առկայությունը կարծես նույնիսկ «պարտադիր» պայման է), և կարծես կախված բնակավայրից, տեղանքից կամ տեղադրման դիրքից՝ տարբերակվում են նաև հանրության կողմից այս խաչերին վերագրվող գործառույթները՝ պահպանական, հուշային, տեղորոշիչ և այլն։ Ինչքան որ տարբեր են այդ խաչերին վերագրվող գործառույթներն, այնքան էլ հակասական է դրանց հանդեպ համայնքային վերաբերմունքը։

Այս խաչերը լայն տարածում են գտել նաև սահմանային բնակավայրերում, որոնք ոչ միայն ցուցում են տարածքի պատկանելությունը, հանդես են գալիս որպես տարածքը նշող ցուցիչ, այլև տեղական-լոկալ ինքնությունն են ներկայացնում։ Ի տարբերություն խաչքարերի, որոնք, որպես կանոն չեն թելադրում բարձր դիրք, մետաղական խաչերը ենթադրում են որևէ բարձունք՝ առավել տեսանելի լինելու համար (և հաճախ ուղեկցվում են զանազան լուսային հարդարանքով)։ Այս խաչերի սահմանը ցուցող գործառույթի մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ բազմաթիվ գյուղերում լայն տարածում է գտել գյուղի սկզբնամասում նման խաչերի տեղադրումը, որը ցուցում է գյուղի սահմանը՝ սկիզբը, ինչպես նաև «պաշտպանում» է գյուղը։ Սա ներպետական սահմանը ցուցող մի ձև է, որը հաճախ իրականացվում կամ կիրառվում է նաև պետական նախաձեռնություններով[4]։

---

[1] Խաչի՝ որպես ամենահաղթ զենքի և հաղթանակի խորհրդանշանի ընկալման մասին մանրամասն տես Սաֆարյան 2023։

[2] Սակայն եթե միջնադարյան վարպետները իրենց արձանագրություններում խաչը որպես հաղթանակի զենք կամ նշան բնութագրելով խուսափել են խաչին զենքի կամ թրի տեսք տալ, նոր խաչքարերի դեպքում մենք հստակ տեսնում ենք, որ խաչը վեր է ածվել թրի։ Սա մի նոր երևույթ է, որը ինչ-որ չափով կարծես շեղում է քրիստոնեական ընդհանուր գաղափարախոսությունից, քանի որ խաչը՝ որը միտված է ապագային, գերակայել է նրա զինական կերպարի վրա։ Այս և նման այլ խաչքարերի օրինակով այսօր կարելի է խոսել խաչքարերի նոր գործառույթի մասին, որը դասական խաչքարը չի ունեցել։։

[3] Խաչային հորինվածքների մասին տես՝ Гуреев 2018; Дмитрева 1984; Шляпкина 1906; https://photogeorgia.website/blog/smotrovaya-ploshchadka-krest/; https://titam.ru/krasnodarskij-kraj/gelendzhik/poklonnyj-krest-v-gelendzhike/; https://murmansk.travel/places/570:

[4] 25 մլն դրամ՝ խաչի և անվանացուցանակի համար, https://hetq.am/hy/article/102410, 04.06.2024:

33 մետրանոց Սուրբ խաչն ու Հույսի խորանը օծվել են, https://bravo.am/news/33-%D5%B4%D5%A5%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D5%B8%D6%81-%D5%8D%D5%B8%D6%82%D6%80%D5%A2-%D5%AD%D5%A1%D5%B9%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%80%D5%B8%D6%82%D5%B5%D5%BD%D5%AB-%D5%AD%D5%B8%D6%80%D5%A1%D5%B6%D5%A8-%D6%85%D5%AE%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A5%D5%B6, 04.06.2024:

Սահմանային նշանի մեկ այլ ձև կարելի է համարել **«ուղեկցող» հուշարձանները**, դրանք այն հուշարձաններն են, որոնք հեռացվում են իրենց բնական/սկզբնական կոնտեքստից և դրանց միջոցով ստեղծվում են նոր՝ ի մասնավորի կրոնածիսական միջավայր (նկ. 3)։ Դրանց հանդիպում ենք սահմանային որոշ բնակավայրերում ինչպես նաև/ավելի հաճախ մարտական դիրքերում, որտեղ մասնավորապես զինծառայողների կողմից այդ նշանների միջոցով ստեղծվում է հատուկ «միջավայր» և որտեղ այդ հուշարձանները որոշակի կրոնական պահանջմունքներ են բավարարում[1]։ Նմանօրինակ հուշարձաններ հանդիպել ենք Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերում, երբ զինծառայողները բնակավայրերի տարածքից «գտել» են խաչքարեր, տապանաքարեր կամ դրանց բեկորներ և տեղադրել մարտական դիրքերում կամ մարտական դիրքերին հարակից տարածքներում, որպես «պահապան» (նկ. 4)։

Արցախյան 44-օրյա և 2023 թվականի սեպտեմբերի 19-ին ադրբեջանական բանակի սանձազերծած պատերազմների և հայ-ադրբեջանական ռազմական գործողությունների արդյունքում տեղի ունեցած սահմանների փոփոխություններին զուգահեռ որոշակի փոփոխությունների ենթարկվեցին սահմանի և սահմանային հուշարձանների մասին ընկալումները։

Ամեն անգամ, երբ սահմանանշանը՝ տարածքի ընդհանուր ցուցիչը, վտանգի տակ է հայտնվում, կառավարություններն ու համայնքի ներկայացուցիչները քայլեր են նախաձեռնում այն պաշտպանելու համար։ Նմանօրինակ մի երևույթի ականատես ենք լինում նաև այսօր, երբ հայ-ադրբեջանական սահմանազատվող տարածքներում համայնքային նախաձեռնություններով իրականացվում է հուշարձանների տարհանում, մասնավորապես՝ Կիրանց գյուղ տանող ճանապարհից հեռացվել է խաչքար-հուշարձանը, որը տեղադրվել էր 2020 թվականին համայնքի ջանքերով[2]։ հետագայում խաչքար-հուշարձանը տեղադրվեց Կիրանց գյուղ մտնող նոր ճանապարհի (հին կամուրջը շրջանցող նոր միջպետական ճանապարհը) աջակողմյան հատվածում (նկ. 5), կամ երբ 2023 թվականին Ադրբեջանի վերահսկողության տակ անցավ Սյունիքի և Արցախի սահմանագլխի՝ «Մեծ եւ Փոքր Սյունիքներ» կամ «Մայր Հայրենիք» կոչվող հուշակոթողը, որին կից 2007 թվականին կանգնեցվել էր խաչքար՝ հուշակոթողի

Երանոս համայնքում կանգնեցվել է ամենաբարձր խաչը, https://hraparak.am/post/691168d20402acd0deb5ea4730d79fe9, 04.06.2024:

Արագվա գյուղում Խաչ է կանգնեցվել, https://jnews.ge/am/?p=88326, 04.06.2024:

Ադամի անունով խաչ է կանգնեցվել, https://www.1lurer.am/hy/2018/04/09/%D4%B1%D5%A4%D5%A1%D5%B4%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B6%D5%B8%D5%BE-%D5%AD%D5%A1%D5%B9-%D5%A7-%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B6%D5%A5%D6%81%D5%BE%D5%A5%D5%AC/89154, 04.06.2024:

[1] Նամնօրինակ հուշարձաններ հանդիպել ենք Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերում։

[2] Մանրամասն տես՝ «Ապամոնտաժվել է Կիրանցի «Արծիվ» խաչքար-հուշարձանը, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%a1%d5%ba%d5%a1%d5%b4%d5%b8%d5%b6%d5%bf%d5%a1%d5%aa%d5%be%d5%a5%d5%ac-%d5%a7-%d5%af%d5%ab%d6%80%d5%a1%d5%b6%d6%81%d5%ab-%d5%a1%d6%80%d5%ae%d5%ab%d5%be-%d5%ad%d5%a1%d5%b9%d6%84%d5%a1/», 04.06.2024:

ապամոնտաժման անհնարինության պատճառով տեղափոխվեց միայն խաչքարը[1]: Հարկ է նկատել, որ հուշարձանը 2024 թվականին հիմնահատակ ավերվել է[2]:

Առանձնահատուկ ուշադրության և հատուկ հետազոտության է արժանի սահմանային նշանների «մրցակցության» երևույթը, ինչին մենք հաճախ կարող ենք ականատես լինել նաև հայ-ադրբեջանական սահմանին, երբ կողմերից յուրաքանչյուրը ցանկանում է նշանի միջոցով ցույց տալ իր գերակայությունը կամ իշխանության սահմանները: Հայ-ադրբեջանական սահմանի դեպքում նշանների այդ «մրցակցությունը» հատկապես վերաբերում է ինքնության, իսկ հայկականի դեպքում նաև կրոնական ինքնության (մեծ և բարձր տեսանելի տեղանքներում տեղադրված մետաղական խաչերի, դրոշների տեսքով) նշաններին, որտեղ կողմերից յուրաքանչյուրը ցանկանում է ցուցադրել իր իշխանության սահմանները: Հատկապես գրավյալ տարածքներում ադրբեջանական կողմը վերջին տարիների ընթացքում կառուցում է մզկիթ «ցուցիչներ», որոնց միջոցով ցույց է տրվում տարածքի ինքնությունը և «լեգիտիմությունը»[3], ինչպես օրինակ, Կովսականում և Բերձորում[4]: Պատահական չէ, որ Բերձորի Սբ. Աստվածածին եկեղեցին մզկիթ դարձնելու դիսկուրսը տարածվեց հենց ադրբեջանական սոցիալական տիրույթում: Այն թեև մզկիթ չդարձավ, բայց պարզ էր, որ այս եկեղեցին մզկիթի վերածելու խոսույթը ցուցում էր տարածքի ինքնության փոփոխությունը և դրա «օրինականացումը»[5]: Մզկիթների կառուցումը որպես հայելային քաղաքականություն՝ որդեգրված պատերազմի ավարտից հետո, մեզ թույլ է տալիս ենթադրել, որ սահմանների գրավումն ամրագրվում է «կրոնական կառույցների» ստեղծումով՝ որպես հակադրություն հայ քրիստոնեությանը:

---

[1] Մանրամասն տես՝ «Սյունիքի և Արցախի սահմանագլխի «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթողն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ՝ հայտնվելով ոչնչացման սպառնալիքի առաջ, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%bd%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%ab%d6%84%d5%ab-%d6%87-%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%ad%d5%ab-%d5%bd%d5%a1%d5%b0%d5%b4%d5%a1%d5%b6%d5%a1%d5%a3%d5%ac%d5%ad%d5%ab-%d5%b4%d5%a5%d5%ae-%d6%87-%d6%83/», 04.06.2024:

[2] Ոչնչացվել է Ադրբեջանի վերահսկողության տակ անցած «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթողը, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%b8%d5%b9%d5%b6%d5%b9%d5%a1%d6%81%d5%be%d5%a5%d5%ac-%d5%a7-%d5%a1%d5%a4%d6%80%d5%a2%d5%a5%d5%bb%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%be%d5%a5%d6%80%d5%a1%d5%b0%d5%bd%d5%af%d5%b8%d5%b2%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5/, 04.06.2024:

[3] Նոր մզկիթների հիմնարկեք՝ Արցախի օկուպացված հայկական բնակավայրերում, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%b6%d5%b8%d6%80-%d5%b4%d5%a6%d5%af%d5%ab%d5%a9%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%b0%d5%ab%d5%b4%d5%b6%d5%a1%d6%80%d5%af%d5%a5%d6%84%d5%9d-%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%ad%d5%ab-%d6%85%d5%af%d5%b8%d6%82/, 04.06.2024:

[4] В Лачине строится одна из самых больших мечетей в Карабахе, https://news.day.az/society/1618322.html, Новая мечеть в Зангилане - образец искусства, https://respublika-news.az/ru/news/1716295351-, 06.06.2024.

[5] Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցին մզկիթի վերածելու ադրբեջանական նախագծի մասին, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%a2%d5%a5%d6%80%d5%b1%d5%b8%d6%80%d5%ab-%d5%bd%d5%b8%d6%82%d6%80%d5%a2-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a2%d5%a1%d6%80%d5%b1%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%ab%d5%b6-%d5%b4%d5%a6/, 04.06.2024:

Այսպիսով, սահմանները, միայն ֆիզիկական չեն, դրանք մշակութայնացվում և ինքնության արտահայտման զանազան ձևեր են ստանում: Կոնֆլիկտի կամ զինված բախումների ժամանակ ոչ միայն ֆիզիկական սահմանների գրավումն է դառնում առաջնային, այլև դրանց մշակութային ինքնության փոփոխությունը: Հետևաբար մեր նշած խաչերը, խաչակիր կոթողները և կառույցները, «ուղեկցող» հուշարձանները դառնում են առաջնային թիրախ հակառակորդի կողմից: Դրան որպես հակակշիռ օկուպացված տարածքներում ադրբեջանական պետական մարմինները նախատեսում էին կառուցել մզկիթներ, որի նախագիծը քննարկման փուլում էր վերջին երեք տարիների ընթացքում:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հաճախ որևէ մեկը չի պլանավորում, չի նախագծում այդ նշանները և կարելի է համարել, որ երբեմն դա զուտ ժողովրդական շարժում է՝ շատ նման Հայրենական պատերազմին նվիրված աղբյուրաշինությանը, նման 60-ականներին խաչքարերի երևան գալուն, նման Ջուղայի խաչքարերի կրկնօրինակման ալիքին և այսպիսով՝ արդյո՞ք կարելի է խոսել այն մասին, որ որոշակի իրավիճակներում տեղանքը սրբազնացվում է տարերային, ժողովրդական ճանապարհով, և դժվար է որևէ հեղինակության՝ լինի դա պետական թե այլ բնույթի, ցուցելը:

Գրականության ցանկ

Anderson J. 2001, Towards a Theory of Borders: States, Political Economy and Democracy," ANNALES Ser. hist. sociol., 11, 2 (26), 219-232.

Van Schendel W. 1997, Toward a Comparative History of Borderlands. Journal of World History, 8 (2), 211-242.

Brunet-Jailly E. 2005, "Theorizing Borders: An Interdisciplinary Perspective", Geopolitics 10 (4), pp. 633-649.

Burroughs C. 2019-2021, Boundary Stones and the Rebellion of Nature: Reflections on a Presumed Statue of Terminus in a Roman Sculpture Garden, Paragone: Past and Present, A Journal on Contestations in the Arts, pp 30-70, brill.com/para.

Guo R. 2015, Cross-Border Management. Theory, Method and Application. Berlin: Springer.

Newman D. 2003, On Borders and Power: A Theoretical Framework, Journal of Borderlands Studies, Volume 18, No. 1, Spring 2003.

Petrosyan H. 2023, Tigranakert in Artsakh, Caucasian Albania, An International Hamndbook, ed. by J. Gippert and J. Dum-Tragut, 433-471.

Ramutsindela M. 2014, Cartographies of Nature: How Nature Conservation Animates Borders, Hardcover – Unabridged, 15 July 2014.

Tarkiainen Ü. 2012, Trees for marking boundaries of landed property in premodern Estonia, Estonian Journal of Ecology, 61 (1), pp 51-63.

Гуреев Е. 2018, Поклонные кресты Русского Севера XVI -XVII: обзор отечественной историографии, Вестник ПСТГУ. Серия II: История. История Русской Православной Церкви. 2018. Вып. 81. С. 11-23.

Шляпкина А. 1906, Древние русские кресты, Санкт-Петербург, 336 стр.

ԴՀՎ 4 - Դիվան հայ վիմագրության, պրակ 4 կազմ. Ս. Բարխուդարյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973:

Հակոբյան Հ. 1986, Մեծ և Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմեական ամրությունների համակարգը, «Պատմա-բանասիրական հանդես», հատոր 4, Երևան, էջ 138-155:

Հակոբյան Հ., Հազեյան Ն. 2002, Երկու նորահայտ արտաշիսյան սահմանաքար Վարդենիկից, Հին Հայաստանի մշակույթը [XII]. 2, Էմմա Խանզադյանի հոբելյանին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԱԱ Գիտություն հրատ., էջ 76-77:

Շահինյան 1984, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.:

Պետրոսյան Հ. 1993, Էթնոտարածքի միջնադարյան ընկալումը և մերօրյա արձագանքները. հայրենիքը և Թորգոմյան տունը, ԱՐ շաբաթաթերթ, Երևան, 21-27.07.1993, էջ 14-15:

Պետրոսյան Հ. 2008, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինթինֆո»:

Սաֆարյան Ա. 2023, Ամենահաղթ զենքի մասին հայկական պատկերացումները և Արցախի ժամանակակից խաչքարային մշակույթը, Պատմություն և մշակույթ, Vol. 19 No. 1:

Սմբատ Սպարապետ 2019, «Դատաստանագիրք» (բնագրային համաբարբառ)/ Կազմող՝ Լ. Ա. Գուլզազարյան - Երևան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ:

Տիրացյան Գ. 1957, Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունները, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, N 10, Երևան:

Օրբելեան Ս. 1910, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս:

Համացանցային նյութեր

Bárcena C. 2019, Demarcation and Visibility of Civic Boundaries in the Western Provinces of the Roman Empire, In book: Franco Luciani and Elvira Migliario, Boundaries of Territories and Peoples in Roman Italy and Beyond, Bari 2019, pp 121-140, https://www.researchgate.net/publication/342355528.

Bastian S. 2013, Border Types and Bordering Processes: A Theoretical Approach to the EU/Polish-Ukrainian Border as a Multi-dimensional Phenomenon, Borders and Border Regions in Europe: Changes, Challenges and Chances, 2013, pp. 21-44.

Lee John W. I. and North M. 2016, Globalizing Borderlands Studies in Europe and North America. Nebraska: University of Nebraska Press, file:///Users/anush/Downloads/Globalizing_Borderlands_Studies_in_Europ.pdf

Olubukola S. 2019, Conceptualizing borders and borderlands in a globalizing world, African journal for the psychological study of social issues, Vol. 22 No. 1, 2019, https://ajpssi.org/index.php/ajpssi/article/view/377.

Potter T. 2022, Horos; Ancient Boundaries and the Ecology of Stone, https://www.openbookpublishers.com/books/10.11647/obp.0266.

Remutsindela M. 2015, Natured borders, Geoforum, Vol. 61, May 2015, Pages 135-137 https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0016718515000718.

Thomas K. 2021, International rivers as border infrastructures: En/forcing borders in South Asia, Political Geography, Vol. 89, August 2021. https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0962629821001086.

В Лачине строится одна из самых больших мечетей в Карабахе, https://news.day.az/society/1618322.html, 06.06.2024.

Дмитрева С. 1984, Мезенские кресты, Памятники культуры. Новые открытия. Письменность. Искусство. Археология. Ежегодник, https://disk.yandex.ru/d/GlLYK4Jd3ShJXZ.

Новая мечеть в Зангилане - образец искусства, https://respublika-news.az/ru/news/1716295351-, 06.06.2024.

Поклонный крест в Геленджике, https://titam.ru/krasnodarskij-kraj/gelendzhik/poklonnyj-krest-v-gelendzhike/, 12.05.2024.

Поклонный крест на горе Крестовой, https://murmansk.travel/places/570, 12.05.2024.

Смотровая площадка Крест Гонио, https://photogeorgia.website/blog/smotrovaya-ploshchadka-krest/, 12.05.2024.

Тирацян Г. 1959, Новонайденная надпись Артасшеса I, царя Армении, ВДИ, 1959, https://elib.gsu.by/bitstream/123456789/14052/1/%D0%93._%D0%A2%D0%B8%D1%80%D0%B0%D1%86%D1%8F%D0%BD_%D0%92%D0%B5%D1%81%D1%82%D0%BD%D0%B8%D0%BA_1959_1.pdf.

Тревер К. 1952, Очерки по истории культуры древней Армении, М.-Л., стр. 162 сл. https://erevangala500.com/upload//kitab/1414186686_5119822.pdf.

Ադամի անունով խաչ է կանգնեցվել, https://www.1lurer.am/hy/2018/04/09/%D4%B1%D5%A4%D5%A1%D5%B4%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B6%D5%B8%D5%BE-%D5%AD%D5%A1%D5%B9-%D5%A7-%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B6%D5%A5%D6%81%D5%BE%D5%A5%D5%AC/89154, 04.06.2024:

Ապամոնտաժվել է Կիրանցի «Արծիվ» խաչքար-հուշարձանը, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%a1%d5%ba%d5%a1%d5%b4%d5%b8%d5%b6%d5%bf%d5%a1%d5%aa%d5%be%d5%a5%d5%ac-%d5%a7-%d5%af%d5%ab%d6%80%d5%a1%d5%b6%d6%81%d5%ab-%d5%a1%d6%80%d5%ae%d5%ab%d5%be-%d5%ad%d5%a1%d5%b9%d6%84%d5%a1/», 04.06.2024:

Արազվա գյուղում Խաչ է կանգնեցվել, https://jnews.ge/am/?p=88326, 04.06.2024:

Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցին մզկիթի վերածելու աղրբեջանական նախագծի մասին,

https://monumentwatch.org/hy/alerts/%d5%a2%d5%a5%d6%80%d5%b1%d5%b8%d6%80%d5%ab-%d5%bd%d5%b8%d6%82%d6%80%d5%a2-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a2%d5%a1%d6%80%d5%b1%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%ab%d5%b6-%d5%b4%d5%a6/, 04.06.2024:

Երանոս համայնքում կանգնեցվել է ամենաբարձր խաչը, https://hraparak.am/post/691168d20402acd0deb5ea4730d79fe9, 04.06.2024:

ՀՀ դրոշի մասին օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=49795, 02.02.2024:

ՀՀ պետական սահմանի մասին օրենք, (https://www.arlis.am/documentview.aspx?docID=52327, 02.02.2024:

Նոր մզկիթների հիմնարկեք՝ Արցախի օկուպացված հայկական բնակավայրերում, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%b6%d5%b8%d6%80-%d5%b4%d5%a6%d5%af%d5%ab%d5%a9%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%b0%d5%ab%d5%b4%d5%b6%d5%a1%d6%80%d5%af%d5%a5%d6%84%d5%9d-%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%ad%d5%ab-%d6%85%d5%af%d5%b8%d6%82/, 04.06.2024:

Ոչնչացվել է Ադրբեջանի վերահսկողության տակ անցած «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթողը, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%b8%d5%b9%d5%b6%d5%b9%d5%a1%d6%81%d5%be%d5%a5%d5%ac-%d5%a7-%d5%a1%d5%a4%d6%80%d5%a2%d5%a5%d5%bb%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%be%d5%a5%d6%80%d5%a1%d5%b0%d5%bd%d5%af%d5%b8%d5%b2%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5/, 04.06.2024:

Սյունիքի և Արցախի սահմանագլխի «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթողն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ՝ հայտնվելով ոչնչացման սպառնալիքի առաջ, https://monumentwatch.org/hy/alerts/%d5%bd%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%ab%d6%84%d5%ab-%d6%87-%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%ad%d5%ab-%d5%bd%d5%a1%d5%b0%d5%b4%d5%a1%d5%b6%d5%a1%d5%a3%d5%ac%d5%ad%d5%ab-%d5%b4%d5%a5%d5%ae-%d6%87-%d6%83/, 04.06.2024:

25 մլն դրամ՝ խաչի և անվանացուցանակի համար, https://hetq.am/hy/article/102410, 04.06.2024:

33 մետրանոց Սուրբ խաչն ու Հույսի խորանը օծվել են, https://bravo.am/news/33-%D5%B4%D5%A5%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D5%B8%D6%81-%D5%8D%D5%B8%D6%82%D6%80%D5%A2-%D5%AD%D5%A1%D5%B9%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%80%D5%B8%D6%82%D5%B5%D5%BD%D5%AB-%D5%AD%D5%B8%D6%80%D5%A1%D5%B6%D5%A8-%D6%85%D5%AE%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A5%D5%B6, 04.06.2024:

Նկ. 1 Չինարի գյուղի մուտքը ցուցող հուշարձանախումբ։



Նկ. 2 «Թուր-խաչ» կամ «սահմանային խաչ»

Խաչիկ գյուղ մոտակայքում։

Նկ. 3 Հուշարձանախումբ մարտական դիրքին կից, Վայոց Ձոր։

Նկ. 4 Հուշարձանախումբ, Քարահունջ գյուղի հարևանությամբ՝ Սուրիկի լիճ կոչվող հատվածում։

Նկ. 5 Կիրանց գյուղ տանող ճանապարհի խաչքար-հուշարձանի ապամոնտաժումը։